ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆԿԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 51 - 52 (16956) ՇԱԲԱԹ 3 ՀՈՒԼԻՍԻ 2021 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԳՐԵԹԵ ԲՈԼՈՐ ՈՒԺԸՆԹԱՑ ՈՒՆԵՆՔ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, հունիսի 25-ին, խորհրդարանում հանդես եկավ կառավարության գործունեության ամենամյա հաշվետվությամբ:

Վարչապետի՝ գործադիր իշխանության կատարած եւ կատարելիք աշխատանքների մանրամասն հաշվետվությունից հետո ինչպես մեծամասնական, այնպես էլ՝ ընդդիմադիր պատգամավորները, առաջադրեցին իրենց դիտողություններն ու հարցերը: Հաշվետվությանը հաջորդած գրեթե երկու օր տեւ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԵՐԵՔ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿՈՎ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»՝ 53.91, «ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ՝ 21.09, «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԴԱՇԻՆՔ՝ 5.22 ՏՈԿՈՍ

Հունիսի 27-ին Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմեց եւ ստորագրեց Հայաստանի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքների արձանագրությունը, ըստ որի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է ընտրողների ձայների 53,91 տոկոսը, «Հայաստան» դաշինքը՝ 21,09 տոկոսը, իսկ «Պատիվ ունեմ» դաշինքը՝ 5,22 տոկոսը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՖՐԱՆՍԻԱ

ԿԱՅԱՑԱՎ ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ-ԷՄԱՆՈՒԵԼ ՄԱԿՐՈՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հուլիսի 1-ին աշխատանքային այցով Փարիզում գտնվող Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին Ելիսեյան պալատում հանդիպում ունեցավ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ:

Հանդիպմանը Վրաստանի եւ Ֆրանսիայի նախագահները քննարկեցին երկու երկրների միջեւ երկկողմ քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների ակտիվացման ու զարգացման, տարածաշրջանում ընթացող զարգացումների, տարածաշրջանում ԵՄ դերի եւ Սեւծովյան անվտանգության հարցերը:

Վրաստանի նախագահն Էմանուել Մակրոնին տեղեկացրեց Վրաստանի օկուպացված տարածքներում տիրող ծանր մարդասիրական իրավիճակի, օկուպացիոն ռեժիմի կողմից մարդու իրավունքների խախտումների եւ մարդկանց առեւանգումների մասին:

Կողմերը քննարկեցին նաեւ այս տարի Ֆրանսիա վրացական էմիգրացիայի 100-ամյակը նշելու հարցը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ՎՐԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հունիսի 28-ին Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն: Ուղերձում, մասնավորապես, ասված է.

- Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքները Ձեր ծննդյան օրվա առիթով: Մաղթում եմ Ձեզ առողջություն, երջանկություն եւ հաջողություններ Ձեր բոլոր նախաձեռնություններում:

Մեր ժողովուրդներին իրար են կապում բազմադարյա պատմությունը եւ դարերի խորքից եկող երկխոսությունը, ինչն էլ պայմանավորում է մեր երկու բարեկամ ժողովուրդների միջեւ ապագայի փոխգործակցության տեսլականը:

Բարձր եմ գնահատում մեր միջեւ ձեւավորված համագործակցությունն ու փոխըմբռնումը եւ համոզված եմ, որ ամենօրյա անկոտրում աշխատանքը կառաջնորդի մեզ դեպի բարեկամական հարաբերություններում նորանոր բարձունքներ:

Ընդունեք խնդրեմ, Ձերդ Գերազանցություն, լավագույն բարեմաղթանքներս եւ խորին հարգանքներիս հավաստիքը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԸՆԴՈՒՆՎԵՑԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՆՈՐ ԿԱՐԳՈՎ

Հունիսի 25-ին, երկօրյա քննարկումներից հետո, Վրաստանի խորհրդարանը՝ 95 ձայնով, երկրորդ ընթերցմամբ աջակցեց «Ընտրական օրենսգրքի փոփոխություններին:

Քննարկմանն «Ընտրական օրենսգրքի փոփոխությունների մասին հիմնական զեկուցումը ներկայացնող խորհրդարանի կրթության եւ գիտության հանձնաժողովի նախագահ Շալվա Պապուաշվիլին անդրադարձավ՝ նախագծում առաջին ընթերցումից հետո արտացոլված փոփոխություններին եւ նշեց, որ նախորդ քննարկումների ընթացքում արտահայտված դիտողություններից եւ կարծիքներից մի քանիսը փաստաթղթում արդեն արտացոլված են:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

«ԿՈՎԿԱՍ», «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԵՎ «ՄՇԱԿ» ԹԵՐԹԵՐԻ ԱՐԺԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՐԴԸ

ԼԵՎԱՆ ԹԱՔԹԱՔԻՇՎԻԼԻ

«Վրաստան» թերթը Վրաստանի մամուլի պատմության նշանակալից հատվածն է: Ճիշտ է, թերթի ծննդյան տարեթիվը նշված է 1920 թվականը, սակայն իրականում նրա արմատները շատ ավելի խորն են: Ըստ իս, «Վրաստան» թերթը 19-րդ դարի այնպիսի արժանավոր պարբերականի արժանավոր զավակն է, ինչպիսին էին 1843 թվականից լույս տեսնող «Կովկաս» թերթը, «Մեղու Հայաստանի» թերթը, որի առաջին համարը լույս ընծայվեց 1858 թվականին եւ «Մշակ» թերթը, որի ծնունդը նշանավորվեց 1872 թվականին:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

Լրացավ մեր սիրելի «Վրաստանի» 100-ամյակը: Իմ կյանքի 70 տարիներից, կարծում եմ չեմ սխալվի, եթե ասեմ, որ 65-ն առնչվել է թերթին: Հիշում եմ, դեռ առաջին դասարանից, երբ անց էր կացվում բաժանորդագրությունը, մեր տանը, երբ որոշում էին, թե որ թերթն ու ամսագիրն ենք դուրս գրելու, այդ ցուցակում առաջինը այն ժամանակվա «Սովետական Վրաստանն» էր: Թերթի հետ իմ կապը է՛լ ավելի ամրացավ, երբ դարձա ոչ միայն բաժանորդագրվողը, այլեւ ընթերցողը, ապա նաեւ՝ թերթի էջերում առանձին հոդվածների հեղինակը:

ՌՈՒԲԵՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԿԸՀ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿԸՆՏՐԻ ՁԱՅՆԵՐԻ ԵՐԿՈՒ ԵՐՐՈՐԴՈՎ

ԿԸՀ ՆԱԽԱԳԱՀ ԹԱՄԱՐ ԺՎԱՆԻԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏՎԵՑ

Խորհրդարանի կողմից մի քանի օր առաջ հաստատված «Ընտրական օրենսգրքի» նախատեսմամբ, ԿԸՀ-ի նախագահին, երկրի նախագահի ներկայացմամբ, խորհրդարանը կընտրի ձայների երկու երրորդով:

Եթե ԿԸՀ-ի նախագահն ընտրվում է խորհրդարանի լիակատար կազմի առնվազն երկու երրորդի մեծամասնությամբ, նրա լիազորությունների ժամկետը հինգ տարի է, իսկ մյուս դեպքերում՝ վեց ամիս:

ԿԸՀ նախագահի թեկնածուն կարող է լինել 25 տարեկանից բարձր Վրաստանի քաղաքացի, ով անկուսակցական է, ունի բարձրագույն կրթություն, տիրապետում է Վրաստանի պետական լեզվին եւ ունի առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ:

Խորհրդարանի կողմից հունիսի 29-ին ընտրական օրենսգրքի փոփոխությունների ընդունումից հետո՝ հաջորդ օրը հայտնի դարձավ, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիան հրաժարական է տվել:

Պարզաբանելով հրաժարականի պատճառները՝ Թամար Ժվանիան սոցիալական ցանցում գրել է.

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ԱԼՅԱՆՍԸ ԴՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԵՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Հունիսի 30-հուլիսի 2-ին աշխատանքային այցով Թբիլիսիում էր գտնվում Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապաթուրայը:

Այցի ընթացքում Ջեյմս Ապաթուրայը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավայի, Արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանու հետ:

Մեկնաբանելով կայացած հանդիպումների արդյունքները, Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը հայտարարեց, որ քննարկվել են ՆԱՏՕ-ին անդամակցության ուղղությամբ Վրաստանի կողմից իրականացվող քայլերը:

- Մենք համաձայնեցինք, որ վերջին 10 տարվա ընթացքում հսկայական առաջընթաց է գրանցվել, եւ վերջերս կայացած գագաթաժողովում այդ առաջընթացը ճանաչվել է: Մենք քննարկել ենք տարածաշրջանային անվտանգության հարցը եւ ուզում եմ շեշտել, որ ՆԱՏՕ-ն տպավորված է Վրաստանի՝ Ադրբեջանին եւ Հայաստանին ռազմական գործողությունները հաղթահարելու եւ բանակցություններ սկսելու միջնորդ ղի եւ աջակցողի դերով: Սա եզակի դեր է, որը կարող է խաղալ միայն Վրաստանը:

Ես շատ ուրախ եմ, որ Եվրամիության աջակցությամբ Վրաստանի խորհրդարանը կարողացավ կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ նորից գործելու, կարեւոր բարեփոխումներ իրականացնելու համար,- ասաց Ջեյմս Ապաթուրայը:

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, Ջեյմս Ապաթուրային՝ իր առաքելության ավարտման կապակցությամբ պարգեւատրեց «Ոսկե գեղմի» շքանշանով:

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԵՐՁԱՓՆՅԱ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ԲԱԶՄԱԶԳ ԾՈՎԱՅԻՆ ՎԱՐԺՄՈՒՆՔՆԵՐԻՆ

Պաշտոնապես մեկնարկել են բազմազգ SEA BREEZE 2021 ծովային զորավարժությունները: Վրացական կողմից մասնակցում են ներքին գործերի նախարարության եւ պաշտպանության նախարարության զորամիավորումները: Վրաստանի ներքին գործերի նախարարության սահմանային ոստիկանության մերձափնյա պաշտպանության դեպարտամենտը զորավարժությունների համար առանձնացրել է երկու պահականավ:

Նշենք, որ ԱՄՆ-ի վեցերորդ նավատորմի եւ Ուկրաինայի ռազմածովային ուժերի համատեղ կազմակերպմամբ, SEA BREEZE 2021 զորավարժությունները Սեւ ծովում մեկնարկեցին հունիսի 28-ին եւ կշարունակվեն մինչեւ հուլիսի 10-ը: Զորավարժություններն ամենածավալուն են այս ավազանի համար, դրանց մասնակցում են վեց մայր ցամաքների 32 երկիր, շուրջ 5 հազար զինծառայող, 32 ռազմանավ, 40 ինքնաթիռ եւ 18 հատուկ ջոկատ:

ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԺՆԵՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ ԱՆԱՐԴՅՈՒՆՔ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 30-ին Ժնեւում անցկացվեց բանակցությունների թվով 53-րդ հանդիպումը:

Եվրամիության անմիջական մասնակցությամբ, Վրաստանի եւ Ռուսաստանի կառավարությունների ներկայացուցիչների միջեւ կայացած այս հերթական հանդիպմանը, թեեւ միջազգային հանրության կողմից արվող խիստ հայտարարություններին, Մոսկվան իր դիրքորոշումը չփոխեց Վրաստանի կողմից որպես օրակարգի գլխավոր հարց առաջադրած օկուպացիոն վարչակազմերի կողմից երկրի քաղաքացիների ապօրինի ձերբակալությունների հարցում: Բանակցություններում Ռուսաստանի ներկայացուցիչ ԱԳ փոխնախարար Անդրեյ Ռուդենկոն կտրականապես հերքեց այդ տարածքի բռնազավթման փաստը, նշելով, որ եթե խոսքը բռնազավթման մասին է, սույն բանակցությունները կորցնում են իմաստը: Ավելին, նա մեկնաբանեց նաեւ դեռեւս հունվարին Ստրասբուրգի միջազգային դատարանի հայտնի որոշումը, ըստ որի՝ մարդու իրավունքների եվրոպական դատարանը Վրաստանի բռնազավթված տարածքներում արդյունավետ վերահսկողության իրականացումը վերապահում է Ռուսաստանին, հետեւաբար, այնտեղ տեղի ունեցող ապօրինի գործողությունների համար պատասխանատու է Ռուսաստանը: ԱԳ փոխնախարարը նշեց, որ այդ տարածքում տեղի ունեցող ձերբակալությունները, մասնավորապես, Զազա Գախելաձեի ձերբակալության հարցը չի մտնում Ռուսաստանի Դաշնության իրավասությունների մեջ:

- Դա Հարավային Օսեթիայի իշխանության իրավասությունն է,- հայտարարեց Անդրեյ Ռուդենկոն:

Նշենք, որ Ժնեւում անցկացված բանակցությունների 53-րդ հանդիպումը, նախորդների օրինակով, ավարտվեց անարդյունք:



ԱՄՆ-ՆԱՏՕ ԶԻՆՈՒԺԵՐԸ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ԱՖՂԱՆՍՏԱՆԸ

Միացյալ Նահանգների եւ ՆԱՏՕ-ի ուժերը հեռացել են Աֆղանստանի Բագրամ քաղաքի (Փարվանի նահանգ) ավիացիոն բազայից:

Հիշեցնենք, որ Միացյալ Նահանգների նախագահ Ջո Բայդենն ապրիլի 14-ին հայտարարել էր, որ որոշում է ընդունել Աֆղանստանում ավարտել գործողությունը, որը դարձել է ամենաերկարատեւ արտասահմանյան ռազմարշավն ամերիկյան պատմության մեջ: Այդ պատերազմն ԱՄՆ-ը սկսել է 2001 թվականի հոկտեմբերին:

Ամերիկյան զորքերի դուրսբերումը սկսվել էր մայիսին: Ավելի վաղ պլանավորվել էր, որ նրանք երկրից կհեռանան մինչեւ սեպտեմբերի 11-ը: 2010-2013 թվականներին գործողության ամենաթեժ պահին արեւմտյան ուժերի թվաքանակը գերազանցել է 150 հազարը: ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի հիմնական մարտական զորամասերն այնտեղից դուրս են բերվել 2014 թվականին:

ԹՈՒՐՔԻԱ

ՆՈՐ ՋՐԱՆՑՔ՝ ՍԵՎ ԵՎ ՄԱՐՄԱՐԵ ԾՈՎԵՐԻ ՄԻՋԵՎ

Թուրքիան Բոսֆորի նեղուցին զուգահեռ սկսել է նոր ջրանցքի շինարարություն: «Ստամբուլ» նոր ջրանցքը միմյանց կկապի Սեւ եւ Մարմարե ծովերը եւ վերլուծաբանների նկատմամբ դրա շինարարությունը նշանակալիորեն կփոխի աշխարհաքաղաքական իրավիճակը Սեւ ծովի տարածաշրջանում, առավելեւս այն պայմաններում, երբ հայտնի չէ, թե այդ նոր ջրանցքի հարցով կգործի արդյոք 1936 թվականի Մոնտերի կոնվենցիան, որով սահմանված են Սեւ ծովի ավազանի երկրների ցանկում չընդգրկվածների ռազմանավերի մուտքի սահմանափակումը:

Նշենք, որ նոր ջրանցքը կառուցվում է Ստամբուլի հյուսիսային հատվածում, երկարությունը կազմելու է 45 կիլոմետր, խորությունը՝ 20,75 մետր, իսկ նվազագույն լայնությունը՝ 275 մետր: Հաշվարկի համաձայն, «Ստամբուլ» ջրանցքի առօրյա անցանելիությունը կկազմի 185 նավ, այն դեպքում, երբ Բոսֆորի նեղուցի անցանելիությունը կազմում է օրական 118-125 նավ:

«TV ԻՄԵԴԻ». «ՄԵԿ ՕՐ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՀԵՏ»

ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ. «ԱՅՍ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՄԵՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ ԻՐԵՆՑ ԱՊՐԱՆՔԸ ԱՐԱԳ ԵՎ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱԽՍԵՐՈՎ ՀԱՍՑՆԵԼ ԹԲԻԼԻՍԻ»

Վրացական ազդեցիկ «Իմեդի» հեռուստաընկերության «Մեկ օր մեծամասնական պատգամավորի հետ» հաղորդաշարն այս անգամ հյուրընկալվել էր Ախալքալաքի, պատմելու Վրաստանի խորհրդարանում Ախալաքալաքիի եւ Նինոծմինդայի մեծամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանի առաջնահերթությունների՝ ենթակառուցվածքային եւ կրթական ծրագրերի մասին:

Տեսանյութում Սամվել Մանուկյանն ընդգծում է, որ այս ուղղությամբ շատ բան արդեն կարողացել է իրականացնել եւ պատրաստ է դիմակայել նոր մարտահրավերների, դրանցից առաջնահերթայինը համարելով ճանապարհաշինությունը: Պատգամավորը պատմում է Մեծ Խանչալի ու Կաթնատու գյուղերը միավորող ասֆալտապատ ճանապարհի շինարարարական աշխատանքների ընթացքի մասին, որի անմխիթար վիճակը խիստ մտահոգում էր տեղացիներին հատկապես ձմռանը: Ընտրություններում հաղթելուց անմիջապես հետո, տեղացիների խնդրանքով, Սամվել Մանուկյանն անցավ խոստման կատարմանը՝ նախաձեռնելով 4 կմ ճանապարհահատվածի շինարարությունը: Ասում է, որ ճանապարհի կարգավորումը մեծապես կնպաստի գյուղատնտեսական ապրանքաշրջանառությանը:

Ըստ Սամվել Մանուկյանի, ընդհանուր առմամբ, շրջանում գրունտապատված է մոտ 120 կմ ճանապարհ: Այդուհանդերձ, ըստ նրա, աշխատանքներն այս ուղղությամբ պետք է առավել ինտենսիվ դառնան: Եվ հատկապես այն ճանապարհահատվածը, որը միացնում է Ախալքալաքին Թբիլիսիի հետ:

- Մենք հնարավորություն կունենանք շատ արագ միանալ Թբիլիսի տանող ճանապարհին, որը շատ կարեւոր է նաեւ զբոսաշրջության տեսանկյունից,- ասում է Սամվել Մանուկյանը: - Այս ճանապարհը կենսականորեն կարեւոր է նաեւ բարձրադիր գյուղերի բնակիչների համար, որպեսզի վերջիններս մոտ լինեն տարածաշրջանի կենտրոնական հատվածին: Այն հնարավորություն կտա գյուղացիներին գյուղատնտեսական իրենց ապրանքը արագ եւ նվազագույն ծախսերով տեղափոխել Թբիլիսի ու տարածաշրջանի այլ քաղաքներ:

Ճանապարհաշինության հետ միասին Սամվել Մանուկյանը մատնանշում է գազիֆիկացիայի խնդիրը: Ըստ նրա, կենտրոնից հեռու գտնվող որոշ գյուղեր զուրկ են գազամատակարարումից:

Տեսանյութում պատգամավորը պատմում է նաեւ Ախալքալաքիի պատմական այգու շինարարության մասին: Դարից ավելի պատմություն ունեցող այգում, ուր, ի դեպ, պատգամավորն անցկացրել է իր մանկությունը, այս պահին ընթանում են արահետների եւ շատրվանի շինարարական աշխատանքներ:

Տարածաշրջանի զարգացման համար, խորհրդարանականը մեծապես կարեւորում է նաեւ մյուս առաջնահերթությունը՝ վրաց լեզվի ուսուցիչների ներկայությունը: Բարձրակարգ մասնագետների պակասը շրջանում Սամվել Մանուկյանը պայմանավորում է հենց պետական լեզվի չիմացության հետ: Նա ուրախությամբ է փաստում, որ շրջանում կառուցվում ու վերանորոգվում են դպրոցներ, ինչը մեծապես կարեւոր է ուսման համապատասխան միջավայր ստեղծելու տեսանկյունից: Եվ սակայն, էական համարում որակյալ մասնագերտների ներկայությունը դպրոցներում: Այդ իսկ պատճառով, Սամվել Մանուկյանը որպես պատգամավոր իր գործունեության առանցքային կետերից մեկը համարում է դպրոցների կառուցումը, վերանորոգումը եւ պարտադիր աջակցությունը՝ վրաց լեզվի մանկավարժներին:

Պատրաստեց ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵԼ Է 24,3 ՏՈԿՈՍ

Վրաստանի կենսաթոշակային գործակալության հաղորդման համաձայն, 2019 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2021 թվականի հունիսի 25-ը կենսաթոշակային հիմնադրամին մասնակցողների խնայողությունների արժեքը (առանց կենսաթոշակային վճարների) աճել է 24,3 տոկոսով:

Հիմնադրամը նշում է բարձր շահութաբերություն՝ չնայած 18,5 տոկոս գնաճին եւ լարիի 17,8 տոկոս արժեզրկմանը:

Ըստ վերջին տվյալների, ներկա դրությամբ կենսաթոշակային խնայողությունների ծավալը կազմում է 1,5 միլիարդ լարի, վճարումները ստացել է շուրջ 873 մարդ:

Կուտակային կենսաթոշակային սխեմայի մասնակիցների թիվն օրեցօր աճում է: Միջին հաշվով դա ամսական կազմում է ավելի քան 10 հազար մարդ: Կուտակային կենսաթոշակային համակարգում ընդգրկված Վրաստանի քաղաքացիների թիվը, վերջին տվյալների համաձայն, կազմում է 1 159 000:

Այս համակարգը Վրաստանում գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, եւ այն պարտադիր բնույթ է կրում:

Հիշեցնենք, որ 24 հազար լարիից պակաս անվանական տարեկան եկամտով աշխատավարձի 6 տոկոսը կփոխանցվի քաղաքացու կենսաթոշակային հաշվին, 2 տոկոսը քաղաքացին ինքը կվճարի, 2 տոկոսը՝ գործատուն եւ եւս 2 տոկոսը՝ պետությունը: Տարեկան աշխատավարձի դեպքում, որը տատանվում է 24 հազարից մինչեւ 60 հազար լարիի սահմաններում, պետությունը կփոխանցի ընդամենը 1 տոկոսը:

Պետությունը մինչ կենսաթոշակի վերադարձը այդ միջոցները ներդնում է Ազգային բանկի վերահսկողության տակ գտնվող տարբեր նախագծերում: Այս գործընթացն իրականացնում է Կենսաթոշակային գործակալության Ներդրումային ծառայությունը:

ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆՆ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովը քննարկեց բնական գազի բաշխման փոքր ընկերությունների՝ ՍՊԸ «Գասկո +», ՍՊԸ «Վարկեթիլաիր», ԲԸ «Էներգոմիության» բնական գազի մատակարարման եւ սպառման սակագների ճշգրտումը:

Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների համաձայն՝ ՍՊԸ «Գասկո +»-ի ճշգրտված սակագինը 53,351 թեթրի/մ3 է՝ ներառյալ ԱԱՀ: Ներկայիս սակագինը մինչեւ հուլիսի 1-ը 48,301 թեթրի/մ3 է:

ՍՊԸ «Վարկեթիլաիր»-ի ճշտված սակագինն է 57,062 թեթրի/մ3: Ներկայիս սակագինը մինչեւ հուլիսի 1-ը 48,677 թեթրի/մ3 է:

ԲԸ «Էներգետիկ միություն» ճշգրտված սակագինը 57,794 թեթրի/մ3: Ներկայիս սակագինը մինչեւ հուլիսի 1-ը կազմում էր 49,443 թեթրի/մ3:

Ինչպես նշվեց, սակագների փոփոխության հիմքը Սեմեկում մուտքագրված ընկերությունների պահանջներն են՝ հիմնվելով բնական գազի սակագնի հաշվարկման մեթոդաբանության 28-րդ հոդվածի 4-րդ պարբերության վրա՝ սակագնի ճշգրտման վերաբերյալ:

Ճշգրտված սակագներն ուժի մեջ են մտնելու հուլիսի 1-ից եւ ուժի մեջ կլինեն մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

Տեղեկատվության համար «Գասկո +» գործում է Սենակիում եւ սպասարկում է մինչեւ 9 հազար բաժանորդ: «Վարկեթիլաիրը» գործում է Թբիլիսիում՝ սպասարկելով մինչեւ 16 հազար բաժանորդի Վարկեթիլիում: «Էներգոկավշիրին» գործում է Թբիլիսիում, այն սպասարկում է Գլդանի եւ Մուխիանի մի քանի միկրոշրջանների, ընդհանուր առմամբ՝ 12 000 բաժանորդ:



ԳԻՈՐԳԻ ՈՒՐՈՒՇԱՁԵՆ՝ ԳՈՒՐԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Գիորգի Ուրուշաձեին նշանակեց Գուրիայի տարածաշրջանի պետական լիազոր: Նա այդ պաշտոնում փոխարինեց Գիորգի Սոխակիային, ով նշանակվել է, բռնազավթված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջության եւ սոցիալական հարցերի նախարարությունում, պետական խնամքի եւ թրաֆիքինգի զոհերի աջակցության պետական գործակալության խորհրդականի պաշտոնում:

Գիորգի Ուրուշաձեն մասնագիտությամբ իրավաբան է: Մինչ Գուրիայի տարածաշրջանում պետական լիազոր նշանակվելը, նա աշխատել է Պետական գույքի ազգային գործակալությունում, իսկ մինչ այդ՝ Ֆինանսների նախարարության սպասարկման գործակալությունում տարբեր պաշտոններում:

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎՈՒՄ Է

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախաձեռնությամբ, հուլիսի 1-ից սոցիալապես անապահով երեխաների օգնությունը կրկնապատկվեց՝ դառնալով 100 լարի՝ 50 լարիի փոխարեն:

Ինչպես տեղեկացրին Վրաստանի վարչապետի մամլո ծառայությունից, վերոնշյալից բացի, ավելանում է օգնություն ստացող երեխաների թիվը: Գոյություն ունեցող 100 000 միավորի փոխարեն, 100 լարիանոց օգնություն կստանան 120 000 միավորից պակաս ընտանիքներում ապրող երեխաները: Որոշումը կվերաբերի ավելի քան 215 000 երեխաների:

Վարչապետի նախաձեռնած ծրագիրը ֆինանսավորելու համար, բյուջեից տարեկան հատկացվելու է 145 միլիոն լարի:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՋ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱԿԱԱՐԵՎՄՏԱՄԵՏՆԵՐԸ TBILISI PRIDE-Ի ԴԵՄ

Հուլիսի 1-5-ին ոչ կառավարական Tbilisi Pride կազմակերպությունը միջոցառումների շարք է նախաձեռնել՝ ի պաշտպանություն ԼԳԲՏ (ոչ ավանդական սեռական կողմնորոշման) հանրության իրավունքների: Միաժամանակ Թբիլիսիում, Ռուսթավելու պողոտայում Լեւան Վասաձեի գլխավորած «էրի» աջ ծայրահեղականների կուսակցությունն ու հակաարեւմտամետ կազմակերպությունները հակացույցեր են անցկացնում:

Հունիսի 30-ին, Թբիլիսիում ԱՄՆ-ի եւ Եվրամիության ներկայացուցչության դիմաց աջ ծայրահեղականներն ու հակաարեւմտամետ ուժերն անցկացրին բողոքի ցույց: Եվրախորհրդարանականների, ինչպես նաեւ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին հատուկ ուղերձով դիմեց նաեւ Վրացական Ուղղափառ եկեղեցու Պատրիարքությունը, նրանց կոչ անելով՝ հրաժարվել Tbilisi Pride-ի շրջանակներում անցկացվող միջոցառումների անցկացումից: Հակառակ այդ կոչերի, Վրաստանում Եվրամիության ներկայացուցչությունը, ինչպես նաեւ երկրում Ավստրիայի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Գերմանիայի, եւս տասը օտարերկրյա ներկայացուցչություններ հրապարակեցին համատեղ հայտարարություն, որով իրենց աջակցությունը հայտնեցին ԼԳԲՏ հանրությանը:

Հուլիսի 1-ին Վրաստանի խորհրդարանի շենքի առջեւ, Ռուսթավելու պողոտայում, Tbilisi Pride-ի շրջանակներում, անցկացվեց առաջին միջոցառումը, որի ընթացքում դիմակայություն տեղի ունեցավ ԼԳԲՏ կողմնակիցների եւ այդ հանրության դեմ հանդես եկող ուժերի միջեւ: Ընդհարման արդյունքում տուժեցին ինչպես ցուցարարները, այնպես էլ՝ իրավապահ աշխատակիցները: Ձերբակալվել է 11 մարդ:

ԷԿՈՆՈՄԻԿԱ - ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԲՈԼՈՐ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԿԱՆ, ՈՐ ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԳՐԱՆՑՎԻ ԵՐԿՆԻՇ ԹՎՈՎ

Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլու հայտարարությամբ, մայիս ամսին գրանցված 25,8 տոկոս աճը ցույց է տալիս, որ տնտեսական աճի դինամիկան շարժվում է դեպի դրական սցենար, ինչը նշանակում է տարեկան համատեքստում երկնիշ տնտեսական աճ եւ նշանակալի է, որ աճը գրանցվում է 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

- Այս տարվա մայիսին Վրաստանի տնտեսությունն աճել է 25,8%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Կարեւոր է, որ աճը գրանցվում է ոչ միայն նախորդ տարվա, այլ նաեւ համավարակին նախորդող ժամանակահատվածի համեմատ: Մասնավորապես, 2019 թվականի համեմատ մենք ունենք 8,8 տոկոս տնտեսական աճ: Կարեւոր է նաեւ նշել, որ տնտեսական աճը պայմանավորված է գործնականում բոլոր ոլորտներում գործունեության աճով, ԱԱՀ (արժեքի ավելացված հարկ) վճարողների շրջանառությունն աճել է 50 տոկոսով, իսկ արտահանումն աճել է կայուն՝ 45 տոկոսով:

Հիմնվելով մայիսին գրանցված տնտեսական գործունեության վրա, ֆինանսների նախարարությունը վերանայում է տարեկան տնտեսական աճի կանխատեսումները, որոնք արդեն կարտացոլվեն բյուջեի նախագծի լրամշակված տարբերակում, որը կներկայացվի Վրաստանի խորհրդարան առաջիկայում քննարկման, կարեւոր է, որ տնտեսական աճի դինամիկան շարժվում է դեպի դրական սցենար, ինչը ցույց է տալիս, որ տնտեսական աճը այս տարի կլինի երկնիշ մակարդակով,- հայտարարեց ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին:

Իր հերթին, Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան նշեց, որ մարտից հետո Վրաստանում ընթանում է տնտեսական վերականգնման գործընթացը, իսկ մայիսին՝ երկրում վավեացվեց բարձր տնտեսական աճ:

- Մայիսին, ինչպես սպասվում էր, գրանցվել է շատ բարձր տնտեսական աճ՝ գրեթե 26 տոկոս: Մարտից ի վեր գիտեք, որ տնտեսության վերականգնման գործընթացն ընթանում է այդպիսի բարձր տեմպերով: 2-3 ամսվա ընթացքում մենք իսկապես աննախադեպ երկնիշ աճ ենք նկատել: Դրական դինամիկա է նկատվել արդյունաբերության գրեթե բոլոր ոլորտներում, բայց հիմնականը շարունակում է մնալ զբոսաշրջությունը, տեղավորման եւ ռեստորանների արդյունաբերությունը: Դա մեծածախ եւ մանրածախ ապրանքներն են, ամենակարեւորը՝ վերամշակող արդյունաբերությունը, արտադրությունը, որոնք իսկապես շատ բարձր մրցունակություն են ձեռք բերել, եւ մենք շատ ուրախ ենք այս տեմպերով: Սա իրական արտադրական տնտեսության այն մասն է, որն ունի առավել զբաղվածություն: Կարեւոր է նաեւ, որ աճը ոչ միայն 2020 թվականի մայիսի համեմատ է, որն իրոք ցածր էր համավարակի պատճառով, այլ 2019 թվականի մայիսին, երբ տնտեսությունը բավական բարձր էր,- ասաց Նաթիա Թուրնավան:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԳՐԵԹԵ ԲՈԼՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՇՈՇԱՓԵԼԻ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՈՒՆԵՆՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ած քննարկումներից հետո Իրակլի Ղարիբաշվիլին հանդես եկավ եզրափակիչ խոսքով:

Պատասխանելով պատգամավորների հարցերին, վարչապետը հայտարարեց, որ առաջնահերթությունը, որն անհրաժեշտ է բոլորին՝ քաղաքացիներին, ժողովրդին, ինչպես նաեւ Վրաստանում ապրող օտարերկրացիներին ու ցանկացած ներդրողին, ով պատրաստվում է տեղում բիզնես հիմնել, քաղաքական կայունությունն է, եւ միակ ուժը, որն ապահովել ու ապահովում է այդ շարունակական խաղաղությունն ու կայունությունը, «Վրացական երազանքն» է: Վարչապետի հավաստմամբ, մենք շոշափելի առաջընթաց ունենք գրեթե բոլոր ուղղություններում, թեեւ դա բավարար համարել չի կարելի:

- Օրինակ, 7 տարի առաջ, հունիսի 27-ին, մենք ստորագրեցինք Ասոցացման համաձայնագիրը, հասանք անայցեգրային կարգի, ազատ առեւտրի: Փաստորեն, յուրաքանչյուր ոլորտում, լինի դա մարդու իրավունքներ, առողջապահություն, կրթություն, սպորտ, մշակույթ, ոստիկանության ապաքաղաքականացում եւ դրա ամրապնդում, անվտանգության ծառայության ուժեղացում, բանակի հզորացում, մենք ունենք շոշափելի առաջընթաց: Բավարա՞ր է, իհարկե՝ ոչ. Ես իմ խոսքում ասացի, որ, չնայած այս ամենին, մեր հիմնական խնդիրը բնակչության, քաղաքացիների աղքատության նվազեցումն է: Ավելի քան կես միլիոն, այսօր պետությունից նպաստ է ստանում գոյատեւելու համար: Նրանց մեջ կա 180 000 երեխա,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց.

- Այս պայմաններում, ցավոք, ընդդիմության որոշ ուժեր բացարձակապես հետաքրքրված չեն մեր քաղաքացիների բարեկեցությամբ ու կայունությամբ, բացառությամբ անձնական էգոյի ու շահերի: Խազարաձեի ասածը հենց անձնական շահերից էր բխում: Այն, ինչ Վաշաձեն ասաց, պայմանավորված էր նաեւ նրա անձնական ամբիցիաներով: Ես այլեւս չեմ խոսում «Ազգային շարժման» ու նրանց անձնական ամբիցիաների, իրենց առաջնորդի անձնական մտադրությունների մասին, ով ամեն կերպ դեմ է գնում մեր երկրին: Կկործանի այս երկիրը, նորից կվաճառի այն, կհանձնի թշնամիներին, կկորցնի լրացուցիչ տարածքներ, միայն թե վերականգնի իր իշխանությունը: Չեք արժանանա, ընկերներ: Ամաչելու եմ, քանի դեռ խոսելու եմ նրանց քաղաքական ժառանգության մասին:

Շատ եմ խոսել մեր երկարաժամկետ տեսլականի մասին, բայց պետք է չմոռանանք, թե ինչպես ստեղծեցինք այսօրը: Մի կողմից, մենք միշտ պետք է հիշենք անցյալը, որպեսզի ապահովագրենք մեր քաղաքացիներին, մեր բնակչությանը, մեր ժողովրդին՝ սխալները կրկնելուց: Մյուս կողմից, հասկանանք, ինչպիսին է մեր այսօրը, եւ ինչպիսին կուզենայինք տեսնել այն: Սա է այն իրականությունը, որի վրա մենք կառուցել ենք մեր տեսլականը, մեր քաղաքականությունը: Ես կցանկանայի շնորհակալություն հայտնել Վրաստանի խորհրդարանին, յուրաքանչյուր պատգամավորի, ով կանգնած է կառավարության կողքին: Որպես միասնական թիմ, ես հավատում եմ, որ միասին շատ բան կարող ենք անել,- ասաց վարչապետը:

Միաժամանակ, վարչապետը, նկատի առնելով ընդդիմադիր առանձին ուժերի դիրքորոշումը, հայտարարեց, որ հնարավոր չէ համագործակցել երկիրը սաբոտաժի ենթարկող քաղաքական ուժի հետ:

- Իհարկե, մենք շատ ենք ցանկանում միավորվել, բայցեւայնպես, «Ազգային շարժման» հետ համագործակցության հեռանկար չեմ տեսնում: Երկիրը վեց ամիս դիվերսիոն ռեժիմի մեջ էր, եւ այսօր նրանք չպատասխանեցին մեր քաղաքացիներին, թե ինչու են վնասել մեր պետությունը: Գիտե՞ք, ինչ են ինձ ասում ամերիկացի եւ եվրոպացի մեր ընկերները: Այն, որ նրանք հոգնել են «Ազգային շարժման» առաջնորդների բողոքներից մեր մասին, ոչ թե կոնկրետ իմ կամ ղեկավարների, այլ երկրում առկա խնդիրների վերաբերյալ, իբր այստեղ ինչ-որ սարսափելի բան է կատարվում: Մեկ անգամ չէ, որ ազգայնականները հայտարարել են, իբր երկիրը պատրաստ չէ դառնալ ՆԱՏՕ-ի անդամ եւ կամ այն, որ չի ստացվի անցնել անայցեգրային ռեժիմի: Բարեկամներ, մենք հասանք դրան, եւ կհասնենք դեռ ավելիին, չնայած ձեր վնասատու քաղաքականությանը: Ես չեմ խուսափում ձեր գործունեությունն այսպես որակելուց: Ընկերներ, դուք պետք է վերջ դնեք այդ վնասաբերությանը, քանի որ երկիրն այդպես չի զարգանա,- ընդգծեց վարչապետը:

Նա հույս հայտնեց, որ ընդդիմության որոշակի մասի հետ համագործակցությունը կշարունակվի:

- Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր խորհրդարանական մեծամասնությանը, մեր կուսակցության նախագահին, խորհրդարանական մեծամասնության առաջնորդներին, նախագահին, յուրաքանչյուր պատգամավորի: Հուսով եմ, մենք կշարունակենք համագործակցել ընդդիմության որոշ հատվածի հետ՝ կառուցողական մթնոլորտում: Կառավարությունը պատրաստ է շարունակել բաց աշխատել ձեզ հետ՝ մեր քաղաքացիների ներկայիս ծանր վիճակը մեղմելու համար:

Ենթակառուցվածքների, գյուղատնտեսության, լինի տնտեսություն, տեղական արտադրություն, վրացական բանակի հզորացում եւ զարգացում, ոստիկանության ուժեղացում եւ այլն, մեր բոլոր գործողությունները ծառայում են դրան, եւ սա ընդամենը 8-9 տարվա ընթացքում, ինչ եկել ենք իշխանություն:

Մեկ անգամ եւս ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեզ եւ մաղթել խաղաղություն ու կայունություն,- նշեց վարչապետը:

ԳՈՐԾԱԴԻՐ

ԶԱՐԳԱՑՄԱՆ 10-ԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ. ԻՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 25-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին խորհրդարանում հանդես եկավ իր ամենամյա հաշվետվությամբ, որտեղ հատկապես կանգ առավ գործադիր իշխանության Երկրի զարգացման 10-ամյա ծրագրի դեռեւս մշակման փուլում գտնվող մանրամասների վրա:

Վարչապետի խոսքով, գործադիր իշխանության մշակվող ծրագիրը վերջնական տեսքով խորհրդարանին կներկայացվի ընթացիկ տարվա աշնանը: Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում այդ ծրագրի առանձին հատվածները, որոնց իրականացումը էականորեն կներգործի երկրի զագացման, բնակչության սոցիալական եւ տնտեսական վիճակի բարելավման վրա:

Կառավարության ղեկավարի խոսքով, զարգացման 10-ամյա ծրագիրը նախատեսում է ուսուցիչների աշխատավարձերի աստիճանական ավելացում եւ մինչեւ 2030 թվականը աշխատավարձը կգերազանցի 2200 լարին: Մինչեւ 2030 թվականը երկրի ամբողջ բնակչությունը լիարժեք հնարավորություն կունենա օգտվել լիցենզավորված եւ որակյալ ջրամատակարարումից: Մինչեւ 2030 թվականը Կարմիր կամուրջ-Սարփիի մայրուղիով երթեւեկությունը կկրճատվի եւ կդառնա 4 ժամ՝ 8 ժամվա փոխարեն: Մինչեւ 2030 թվականը խոզի, թռչնամսի եւ տավարի մսի արտադրությունը կկրկնապատկվի, կաթի մատակարարումը կկազմի 108%: Գինու արտահանումից ստացված հասույթը կբարձրանա միլիարդի: Լուրջ փոփոխություններ են նախատեսվում զինված ուժերում, որ մինչեւ 2030 թվականը երկիրը կունենա արդյունավետ, գերժամանակակից մարտական ուժ, որը կկարողանա ժամանակին պատշաճ արձագանքել սպառնալիքներին: Ընդերքի բարեփոխումների արդյունավետ իրականացման արդյունքում, մինչեւ 2030 թվականը կստեղծվի 30,000 նոր աշխատատեղ: Ընդերքի հատվածում այսօր աշխատում է շուրջ 37,000 մարդ:

10-ամյա ծրագրում նախատեսվում է զգալիորեն ավելացնել Վրաստանում ներդրողների թիվը: Կշարունակվեն գործել բիզնեսի խթանման պետական ծրագրեր: Մասնավորապես, «Արտադրի'ր Վրաստանում» գործակալությունը կօգնի ավելի քան 2000 ընկերությունների արտահանման իրականացման գործում, փոքր եւ միջին ձեռնարկություններում աշխատանքի կտեղավորվի 100 հազար քաղաքացի, իսկ արտադրողականությունը կբարձրանա 50 տոկոսով:

Ծրագրում առանձին կետով նշված է զբոսաշրջության ոլորտը: Ծրագրի համաձայն, զբոսաշրջությունից եկամուտը կկրկնապատկվի՝ հասնելով 6,5 միլիարդ դոլարի:

Իրակլի Ղարիբաշվիլու խոսքով, առանձնակի ուշադրություն կհատկացվի պետական լեզվի ծրագրի կատարելագործմանն ու խորացմանը: Դրա շնորհիվ, մինչեւ 2030 թվականը ոչ վրացական դպրոցների շրջանավարտների 99 տոկոսը կտիրապետի պետական լեզվին:

ԿՐԹԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑ ԵՆ ԿԱՑՎՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԽՍՏԻՎ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՀԻՎԱՆԴ ԴԻՄՈՐԴՆԵՐԸ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՀԱՆՁՆԵՆ ՀԱՏՈՒԿ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հուլիսի 1-ին մեկնարկեցին Միասնական ազգային քննությունները: Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված իրավիճակի հաշվառմամբ, 2021 թվականի քննության գործընթացը կանցկացվի Վրաստանի օկուպացված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից սահմանված հանձնարարականների լիարժեք պահպանմամբ:

«Գոյություն ունեցող հանձնարարականները վերանայվել են, համաձայն՝ երկրում գործող կանոնակարգերի, որպեսզի կանխեն Covid-19-ը, եւ անցյալ տարվա լավ փորձի արդյունքում մշակվել են նոր մոտեցումներ»,- թեմայի կապակցությամբ առողջապահության, կրթության ու գիտության, ինչպես նաեւ Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ներկայացուցիչների մասնակցությամբ հատուկ հրավիրված մամլո ասուլիսում հայտարարեց կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Նունու Միցկեւիչը:

Նրա խոսքով, հիմնական նորությունն այն է, որ քննության գործընթացից դուրս չեն մնա այն դիմորդները, որոնք քննությունների ընթացքում վարակվել են կորոնավիրուսով:

- Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը, դիմորդի մոտ կորոնավիրուս ախտորոշվելու դեպքում, համապատասխան առարկայից քննությունը կանցկացնի երկու շաբաթից ոչ շուտ՝ հատուկ կազմված ժամանակացույցով: Կարեւոր է, հաշվի առնել աշխարհագրական ծածկույթը,- ասաց Միցկեւիչը:

Իր հերթին, Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Սոփո Գորգոձեն նշեց, որ կենտրոնն այս տարի կարանտինային տարածքներ կկազմակերպի նրանց համար, ովքեր ունեն 370C եւ ավելի բարձր ջերմություն, բայց չհաստատված կորոնավիրուս:

Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջապահության ազգային կենտրոնի փոխտնօրեն Պաատա Իմնաձեն ընդգծեց, որ երկրում հաստատված ընդհանուր կանոնակարգի համաձայն, պաշտպանիչ դիմակ կրելը պարտադիր է քննության գործընթացին մասնակից բոլոր անձանց համար:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի հաղորդմամբ, հուլիսի 14-ից կսկսվեն ուսուցիչների եւ ուսուցչի հավակնորդների քննությունները: Քննությունների համար գրանցվել է ավելի քան 28 700 գործող ուսուցիչ կամ ուսուցչի հավակնորդ:

Ինչ վերաբերում է Միասնական ազգային քննություններին, ապա միասնական ազգային քննությունները մեկնարկեցին հուլիսի 1-ից: Ազգային քննություններին մասնակցելու է ավելի քան 38 400 դիմորդ: Մագիստրոսական քննությունները կանցկացվեն հուլիսի 27-30-ն ընկած ժամանակահատվածում: Քննությունների համար գրանցվել է ավելի քան 12 800 դիմորդ: